



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. երկրորդ կիսամյակում /վերլուծություն/

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 88769 գործարքներ, որոնց քանակը 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 35.1%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 7.2%-ով :

2009թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 23789 օտարման գործարքների 81.1%-ը կազմել են առուվաճառքները, 17.9%-ը՝

նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 38.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.1%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2009թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, աճել է 32.3%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 13.8%-ով: 2009թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 7172 առուվաճառքի գործարքների 67.3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. երկրորդ կիսամյակում, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 70.9%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 21.9%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2008թ.	երկրորդ կիսամյակ 2009թ.	առաջին կիսամյակ 2009թ.
Կենտրոն	491100	458800	484500
Արաբկիր	405500	356200	361100
Քանաքեռ-Զեյթուն	308400	271400	281200
Նոր-Նորք	273800	221500	240200
Ավան	273000	225700	239900
Էրեբունի	272800	239000	255200
Շենգավիթ	281400	235700	248200
Դավթաշեն	301200	254700	267500
Աջափնյակ	271100	228600	243300
Մալաթիա-Սեբաստիա	260700	222200	230600
Նուբարաշեն	159900	140400	143200
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	299900	259500	272200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, նվազել են 4.7%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 13.5%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. առաջին կիսամյակի համեմատ կնվազեն շուրջ 12.5%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ շուրջ 30.5%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2177 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 52.0%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 8.9%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության

արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2008թ.	երկրորդ կիսամյակ 2009թ.	առաջին կիսամյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	140900	136000	133700
	Ապարան	35900	44300	41200
	Թալին	46300	49300	48000
Արարատ	Արտաշատ	106600	88100	91600
	Մասիս	137000	117800	135200
	Վեդի	83400	89000	87800
	Արարատ	68500	85700	83000
Արմավիր	Վաղարշապատ	174500	157700	170900
	Արմավիր	127300	114800	118300
	Մեծամոր	88400	80500	80000
Գեղարքունիք	Սևան	102400	88500	93900
	Գավառ	50700	43100	50300
	Մարտունի	70800	81100	77900
	Վարդենիս	33100	32100	33500
	Ճամբարակ	16600	19100	18100
Լոռի	Վանաձոր	102000	91600	92800
	Ստեփանավան	48700	55500	53400
	Մալիտակ	63100	75800	70700
	Ալավերդի	32700	31900	33900
	Տաշիր	33100	35000	35400
	Թումանյան	5600	6100	6000
	Շամլուղ	3200	3400	3300
	Ախթալա	13000	14000	13700
Կոտայք	Արուսյան	176500	145600	145500
	Նոր Հաճն	137000	130700	134800
	Բյուրեղավան	115400	97100	102200
	Եղվարդ	125800	120900	122200
	Հրազդան	73600	59800	65000
	Ծաղկաձոր	166000	179500	179000
	Չարենցավան	97400	78800	89200
Շիրակ	Գյումրի	115200	110700	107400
	Արթիկ	59100	56200	61500
	Մարալիկ	28500	29700	31100
Սյունիք	Գորիս	113300	133400	121700
	Կապան	101300	104000	107200
	Միսիան	82800	83700	90700
	Մեղրի	48700	55700	54900
	Ագարակ	29900	32800	33200
	Քաջարան	52800	58400	56400
	Դաստակերտ	7000	8000	7700
Վայոց Ձոր	Վայք	80900	70300	76400
	Եղեգնաձոր	103500	109400	109300
	Զերմուկ	137200	111700	125000
Տավուշ	Դիլիջան	103900	90300	97900
	Իջևան	138900	131600	140800

	Բերդ	40300	42100	42900
	Նոյեմբերյան	30800	33400	33700
	Այրում	21100	24000	23100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, նվազել են 2.5%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.5%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2009թ. երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, կնվազեն շուրջ 10.5%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ շուրջ 22.5%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 2468 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 774, մարզերում միասին վերցրած՝ 1694: 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 37.1%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 2.1 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 18.5%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 10.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում աճել է 31.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 21.3%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2008թ	երկրորդ կիսամյակ 2009թ	առաջին կիսամյակ 2009թ
Կենտրոն	506900	473800	509600
Արաբկիր	437300	368400	408900
Քանաքեռ-Զեյթուն	323200	282000	314600
Նորք-Մարաշ	305900	282200	310800
Ավան	287900	236200	278300
Էրեբունի	289000	251800	288400
Շենգավիթ	292300	245000	281000
Դավթաշեն	320000	266400	309400
Աջափնյակ	298600	243300	281900
Մալաթիա-Սեբաստիա	289900	233900	272400
Նուբարաշեն	166700	144900	163600
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	319800	275300	310800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, նվազել են 11.4%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 13.9%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի

արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ կնվազեն շուրջ 18.7%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ շուրջ 30.9%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2008թ.	երկրորդ կիսամյակ 2009թ.	առաջին կիսամյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	144600	139300	142600
	Ապարան	38600	46400	43600
	Թալին	48500	51200	51500
Արարատ	Արտաշատ	110300	91100	102100
	Մասիս	140700	126700	144800
	Վեդի	91500	91500	93500
	Արարատ	70100	88400	84900
Արմավիր	Վաղարշապատ	178400	167300	179300
	Արմավիր	130600	119300	126700
Գեղարքունիք	Սևան	104700	91700	102900
	Գավառ	53600	48000	57300
	Մարտունի	77100	83500	82400
	Վարդենիս	36400	34500	38900
	Ճամբարակ	21100	21000	22500
Լոռի	Վանաձոր	107200	95200	103100
	Ստեփանավան	53300	58400	57600
	Սպիտակ	67300	78000	73800
	Ալավերդի	36600	34400	37500
	Տաշիր	37200	37200	39400
	Թումանյան	10300	10100	10400
	Շամլուղ	7300	7400	7400
	Ախթալա	16100	18200	17400
Կոտայք	Աբովյան	191000	151300	169500
	Նոր Հաճն	141700	136400	145400
	Բյուրեղավան	118300	99700	115200
	Եղվարդ	132000	124500	132400
	Հրազդան	78600	62900	75200
	Ծաղկաձոր	262100	294300	281400
	Չարենցավան	100400	83300	97800
Շիրակ	Գյումրի	117300	113800	119600
	Արթիկ	62200	58800	65700
	Մարալիկ	32500	31800	34750
Սյունիք	Գորիս	122900	135100	129100
	Կապան	103400	107900	115000
	Միսիան	84700	86900	95000
	Մեղրի	51000	57700	58100
	Ագարակ	33100	35000	35800
	Դաստակերտ	10400	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	84100	72700	83400

	Եղեգնաձոր	107300	112700	116100
	Ջերմուկ	95700	111700	108200
Տավուշ	Դիլիջան	114400	97700	112400
	Իջևան	140500	133300	149000
	Բերդ	42000	43800	46200
	Նոյեմբերյան	36200	34900	37400
	Այրում	23000	25800	24900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, նվազել են 5.4%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 2.7%-ով: Սակայն, եթե հաշվի առնվի սույն թվականի մարտի սկզբին միջազգային արժույթների, մասնավորապես ԱՄՆ դոլարի, նկատմամբ շուրջ 20%-ով դրամի արժեզրկումը և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2009թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, կնվազեն շուրջ 13.2%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ շուրջ 21.9%-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել են 8415 միավոր /7194.69 հա/ հողեր, որից Երևանում՝ 535 միավոր /91.34 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3947 միավոր /6610.44 հա/, որից Երևանում՝ 20 միավոր /24.73 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 3220 միավոր /344.79 հա/, որից Երևանում՝ 415 միավոր /25.42 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 1032 միավոր /117.44 հա/, որից Երևանում՝ 96 միավոր /40.89 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 96 միավոր /28.83 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.30 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 85 միավոր /79.63 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 17 միավոր /1.60 հա/,
- ջրային հողեր՝ 18 միավոր /11.97 հա/:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 7619 միավորի /6650.55 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 485 միավոր /88.24 հա/, նվիրատվության գործարքներ՝ 704 միավոր /512.40 հա/, որից Երևանում՝ 48 միավոր /3.05 հա/ և փոխանակության գործարքներ՝ 92 միավոր /31.75 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.05 հա/:

Հանրապետությունում 2009թ. երկրորդ կիսամյակում, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 26.3%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 15.1%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 34.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 17.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Լոռու մարզում՝ 3278.15 հա, որից 3169.65 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 27.2%-ը կամ 2070 գործարքներ /4039.25 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝

136 միավոր /27.39 հա/, իսկ 72.3%-ը կամ 5507 միավորը /2582.17 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 346 միավոր /60.82 հա/: 2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 42 գործարք /29.13 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2009թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	1	20.00	2	0.07	90	4.00	43	3.32	19	4.73	2	0.23	282	18.55	43	37.31
Արագածոտն	98	163.26	3	5.22	15	1.90	74	5.91	289	288.39	1	0.09	188	18.01	9	0.55
Արարատ	54	191.39	22	4.20	22	1.70	91	1.04	410	220.00	5	2.13	355	31.14	34	0.59
Արմավիր	68	209.65	7	1.73	39	1.96	54	2.16	498	594.19	3	0.03	348	35.04	26	0.87
Գեղարքունիք	12	13.65	1	0.60	199	16.03	35	8.90	326	204.98	0	0.00	95	10.09	8	2.21
Լոռի	187	2979.45	5	1.12	52	45.60	105	6.43	376	190.20	2	0.60	383	53.33	9	0.70
Կոտայք	99	152.81	12	0.65	80	5.64	134	4.16	512	376.34	6	0.48	475	42.13	51	7.59
Շիրակ	19	31.46	7	0.95	35	8.95	44	1.78	184	176.59	2	0.16	50	5.60	17	0.81
Սյունիք	15	41.37	2	1.56	4	0.19	50	1.66	82	89.86	2	0.15	28	2.15	12	1.24
Վայոց Ձոր	38	50.98	1	1.07	33	2.71	64	1.37	112	45.70	2	2.13	33	3.50	12	2.76
Տավուշ	6	2.65	2	0.34	60	3.72	41	5.35	105	56.58	1	0.09	34	2.65	9	1.82
Ընդամենը	597	3856.67	64	17.51	629	92.40	735	42.08	2913	2247.56	26	6.09	2271	222.19	230	56.45

Ստորև ներկայացվում է 2009թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	121	5.54	2	0.07	79	2.57	40	2.90	15	21.85	1	20.00	0	0.00	11	1.43	3	0.42
Արագածոտն	4	0.11	0	0.00	1	0.10	3	0.01	183	175.92	95	163.00	3	5.22	14	1.80	71	5.90
Արարատ	16	1.92	4	1.87	1	0.002	11	0.05	172	196.33	53	191.32	18	2.32	21	1.70	80	0.99

Արմավիր	10	0.58	3	0.51	0	0.00	7	0.07	151	212.13	61	206.85	4	1.22	39	1.96	47	2.10
Գեղարքունիք	6	0.81	0	0.00	3	0.23	3	0.58	241	38.37	12	13.65	1	0.60	196	15.80	32	8.32
Լոռի	16	40.97	0	0.00	7	40.56	9	0.41	332	2991.44	186	2979.25	5	1.12	45	5.05	96	6.02
Կոտայք	50	2.11	3	0.04	16	0.79	31	1.28	261	157.86	85	149.52	9	0.61	64	4.86	103	2.87
Շիրակ	27	1.46	1	0.05	13	0.61	13	0.80	77	40.11	18	29.89	6	0.90	22	8.34	31	0.98
Սյունիք	6	0.18	0	0.00	0	0.00	6	0.18	65	44.59	15	41.37	2	1.56	4	0.19	44	1.47
Վայոց Ձոր	5	0.05	0	0.00	0	0.00	5	0.05	131	56.08	38	50.98	1	1.07	33	2.71	59	1.32
Տավուշ	22	3.89	0	0.00	16	0.63	6	3.26	85	8.01	4	2.49	2	0.34	44	3.09	35	2.09
Ընդամենը	283	57.62	13	2.54	136	45.49	134	9.59	1713	3942.69	568	3848.32	51	14.96	493	46.93	601	32.48

Հանրապետությունում 2009թ. երկրորդ կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 29 գործարքներ /8.34 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. երկրորդ կիսամյակում, 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 50.1%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 57.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 50.0%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 40.9%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 60.4%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 51.0%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 15.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	72	116.31	35.2	1244.3	250.3	213	148.55	365.0	12000.0	4376.5
Ապարան	3	3.75	46.4	446.8	246.6	15	24.30	86.5	2727.3	538.2
Թալին	20	42.94	33.6	113.2	51.5	38	62.83	93.6	5494.5	476.2
Ծաղկահովիտ						20	52.50	79.5	1000.0	242.6
Արարատի մարզ										
Արտաշատ	3	1.17	70.0	2117.5	1434.1	175	81.96	335.1	10833.3	2081.3
Մասիս	35	88.85	10.0	2185.5	386.4	73	68.33	200.0	11904.8	2942.5
Վեդի	15	101.30	17.7	672.2	246.1	151	66.32	207.0	10795.1	1817.9
Արմավիրի մարզ										
Արմավիր	40	129.34	35.7	1604.3	230.7	256	280.48	294.3	9090.0	1145.8
Բաղրամյան	14	70.51	33.8	797.5	230.0	99	234.42	90.6	2561.1	647.5
Վաղարշապատ	7	7.00	5.6	550.0	288.0	135	73.84	444.4	11764.7	2824.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	1.19	72.7	102.4	87.6	215	60.72	199.8	1875.0	440.3
Ճամբարակ	6	5.80	127.0	791.0	455.1	49	36.22	60.5	953.3	242.4
Մարտունի	1	3.00	106.7	106.7	106.7	7	1.87	51.1	2850.0	566.0
Սևան	2	3.40	118.8	1221.0	669.9	15	33.28	52.2	2134.8	236.2
Վարդենիս	1	0.26	618.1	618.1	618.1	40	72.90	41.2	2575.1	398.8

Լոռու մարզ										
Այլվերդի	1	0.50	70.4	70.4	70.4	112	28.21	170.4	6424.2	954.6
Գուգարք	56	903.19	35.5	405.8	229.5	11	2.78	234.6	6065.9	1088.3
Մայիտակ	109	2032.07	27.3	1120.0	182.9	11	3.50	250.0	5555.5	599.7
Ստեփանավան	20	43.49	210.0	1197.0	403.5	28	28.41	90.6	1686.6	389.9
Տաշիր						107	78.04	45.3	1384.4	196.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	26	46.65	77.5	5203.7	537.1	229	87.04	279.3	11942.7	4730.6
Եղվարդ	37	61.13	74.3	1807.9	592.8	220	244.78	174.4	11971.8	3330.4
Հրազդան	22	41.74	45.0	861.3	457.7	60	41.27	130.5	10256.4	1543.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	3.04	434.2	434.2	434.2	64	58.14	252.0	1693.1	487.5
Ամասիա	3	7.17	122.4	385.0	253.7	7	26.37	40.9	261.0	133.9
Անի	14	19.67	85.3	716.9	382.7	41	50.04	110.6	546.9	277.4
Աշոցք						20	19.83	58.5	215.8	119.8
Արթիկ						52	22.21	79.4	1428.6	240.3
Սյունիքի մարզ										
Գորիս	5	19.28	137.5	2220.0	678.2	40	32.31	92.6	1023.2	481.9
Կապան	9	19.09	40.3	306.2	168.3	9	4.50	120.0	841.6	281.5
Մեղրի						11	3.29	193.0	3000.0	589.6
Միսիան	1	3.00	263.0	263.0	263.0	22	49.76	46.3	1977.4	290.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	31	30.48	34.4	986.0	150.3	86	28.25	125.0	10000.0	1509.8
Վայք	7	20.50	34.2	104.4	59.7	26	17.45	58.8	1430.7	503.2
Տավուշի մարզ										
Բերդ						23	6.44	213.3	3783.8	506.0
Իջևան	2	1.08	115.8	6000.0	3057.9	28	8.16	267.5	9454.5	1017.1
Նոյեմբերյան	2	1.41	149.8	312.2	231.0	54	41.98	46.7	7368.4	749.6

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. երկրորդ կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	8	8448.0	175.0	3080.0	420.0	160	137551.1	130.7	22200.0	2570.9
Ապարան	4	7778.0	73.3	483.4	254.0	17	23004.0	124.1	609.6	250.4
Թալին	2	1800.0	107.3	208.3	157.8	9	17377.0	63.2	1454.8	134.6
Ծաղկահովիտ						2	2140.0	60.0	214.3	77.2
Արարատի մարզ										
Արտաշատ	9	9410.0	532.0	540.5	535.0	79	78909.5	173.9	7140.3	892.2
Մասիս	9	5036.0	304.6	3003.1	1427.4	193	137446.0	187.5	25000.0	1218.6
Վեդի	3	2505.4	146.9	1064.8	606.1	81	90803.0	126.1	5000.0	660.8
Արմավիրի մարզ										

Արմավիր	39	19573.0	290.4	1400.0	1299.7	109	122254.8	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						7	12567.0	100.0	833.3	176.4
Վաղարշապատ						231	214159.0	197.4	26528.4	1536.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	8	9680.0	174.2	183.3	179.0	22	19701.0	186.6	1084.3	440.9
Ճամբարակ	171	135290.0	102.0	261.1	127.0	13	11779.0	71.3	2286.2	130.0
Մարտունի	6	2444.0	113.1	118.8	117.2	36	39230.0	119.3	5000.0	273.1
Սևան	11	10559.0	113.3	466.0	374.0	15	16952.5	240.0	3110.4	217.1
Վարդենիս						9	13207.0	72.5	987.2	146.2
Լոռու մարզ										
Ալավերդի	2	776.0	609.5	891.0	750.3	18	30719.0	114.3	1388.9	193.0
Գուգարք	14	12737.0	51.0	5983.6	1164.2	19	12392.0	77.9	14083.3	719.6
Սպիտակ	26	31281.0	48.9	509.1	161.5	335	408099.0	104.9	1348.3	188.3
Ստեփանավան	3	5658.0	75.6	564.4	235.2	9	79333.0	88.2	1666.7	138.8
Տաշիր						1	1030.0	45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Արմվյան	36	21501.7	182.5	3484.5	2406.0	254	231279.4	264.5	35353.5	2045.8
Եղվարդ	18	18659.0	226.0	3140.0	1514.5	171	143760.0	173.6	27000.0	2767.7
Հրազդան	10	8400.0	38.6	1265.4	603.0	45	42041.0	117.7	34848.5	1345.2
Շիրակի մարզ										
Ախուրյան	10	76462.0	154.0	4296.9	1822.2	26	22560.0	113.6	18750.0	330.2
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	6	3200.0	130.0	465.0	281.9	10	14820.0	67.9	180.6	117.9
Աշոցք						1	6130.0	40.8	144.0	59.7
Արթիկ	6	3735.0	57.5	276.8	143.9	13	12532.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	370.0	1150.0	1150.0	1150.0	13	9061.0	112.2	1700.0	286.5
Կապան	3	1496.0	805.0	1801.4	1449.9	6	4117.0	67.9	2638.9	228.7
Մեղրի						5	5823.0	68.5	632.9	144.1
Սիսիան						4	2540.0	123.5	875.0	157.8
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	11	10551.0	134.2	765.0	589.4	21	23439.0	96.7	7659.6	392.7
Վայք	22	16500.0	854.0	854.0	854.0	12	11607.0	120.7	1448.3	153.6
Տավուշի մարզ										
Բերդ						4	3977.0	75.8	810.0	95.2
Իջևան	41	30791.0	156.4	2674.1	1280.1	29	21820.0	74.1	14423.1	479.3
Նոյեմբերյան	3	149.0	600.0	1330.0	1085.0	1	720.0	125.0	1948.1	163.0

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 56 գործարքներ 10.00 հա մակերեսով, ընդ որում 3-ը՝ /0.71 հա/ Շիրակի, 44-ը՝ Լոռու /6.92 հա/ և 9-ը՝ /2.37 հա/ Կոտայքի մարզերում :

2009թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 6877 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 86.0%-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2009թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 0.4%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել՝ 14.9%-ով :

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 307 բնակարանների, 208 անհատական բնակելի տների, 2284 հասարակական և 424 արտադրական նշանակության օբյեկտների, 3135 միավոր /19991.00 հա/ հողերի և 519 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի

կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 53 վարձակալության գործարքների, այդ թվում 20 միավոր /0.27 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2009թ. առաջին կիսամյակի համեմատ նվազել է 77.4%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 55.1%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 19991.00 հա հողերից 37.49 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 19953.51 հա հողերի 129.35 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 102.14 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4595.91 հա, որից 3537.42 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 6017.86 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. երկրորդ կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	6	824.63	117	591.33
Արարատ	16	2564.34	280	1517.96
Արմավիր	0	0.00	63	866.58
Գեղարքունիք	9	774.56	784	2769.22
Լոռի	4	705.00	71	499.67
Կոտայք	0	0.00	47	194.41
Շիրակ	7	262.00	523	1173.78
Սյունիք	8	175.13	146	3362.29
Վայոց Ձոր	1	712.20	93	836.15
Տավուշ	0	0.00	23	61.14
Ընդամենը	51	6017.86	2147	11872.53

2009թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11182 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. երկրորդ կիսամյակում 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 97.2%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 13.3%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.2%/, առանձնատների /23.0%/, հասարակական նշանակության օբյեկտների /12.8%/ և հողերի /13.6%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5005 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 94.4%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 1.2%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 780 գործարքներ, որից 605՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 79.9%-ն իրականացվել են բազմաբնակարան

բնակելի շենքերի բնակականների, 13.1%-ն՝ անհատական բնակելի տների, 3.1%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.5%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.3%-ն՝ ամառանոցների, 0.3%-ն՝ ավտոտնակների, 1.9%-ը՝ հողերի և 0.5%-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Գործարքների քանակը 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 3.1 անգամ, ընդ որում Երևանում՝ 3.4 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ 2.4 անգամ: Գործարքների քանակը 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 14.8%-ով, ընդ որում Երևանում՝ 3.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 38.8%-ով:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 2440.74 հա մակերեսով հողեր, որից 77.54 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 88.4% կամ 2157.22 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.12 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 912.25 հա, որից 887.83 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 10 և 8 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.02%: 2009թ. առաջին կիսամյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 21.7%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 57.1%-ով: 2009թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արարատի մարզում՝ 22.2%:

2009թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 13584 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2009թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 17.5%-ով, իսկ 2008թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 4.0%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.2%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն